3. Իմաստ ֆունկցիան (x, y) իմաստներին այնպիսի f բազմության է, որ ցանկացած x թվի համար այդ բազմությունում կա մեկից ոչ պակաս (x, y) իմաստով, որի առաջին տարրը x թիվն է: Այդ մեկ կամ բազմաթիվ թիվը հնգց $f(x)$-ն է՝

վրա, իսկ եթե $x_1 < x_2$ ներառում է $f(x_1) > f(x_2)$, ապա f ֆունկցիան կոչվում է նվազող E բազմության վրա: Այլ կերպ՝ ֆունկցիան կոչվում է աճող E բազմության վրա, եթե E-ին պատկանող ցանկացած x_0-ի և x-ի համար անկախ փոփոխականի դրական աճերի դեպքում ֆունկցիայի աճերը դրական են, և նվազող՝ եթե անկախ փոփոխականի դրական աճերի դեպքում ֆունկցիայի աճերը բացասական են:

Ֆունկցիայի սահման: Սահման. b թիվը կոչվում է $f(x)$ ֆունկցիայի սահման x-ը a-ին ձգտելիս (կարճ՝ a կետում), եթե ցանկացած $\varepsilon > 0$ թվի համար a-ին բավականաչափ մոտ բոլոր x-երի դեպքում (բացի, թերևս, $x = a$ արժեքից) տեղի ունի $|f(x) - b| < \varepsilon$ անհավասարությունը:

Ավելի ճշգրիտ սահմանում. b թիվը կոչվում է $f(x)$ ֆունկցիայի սահման a կետում, եթե ցանկացած $\varepsilon > 0$ թվի համար գոյություն ունի այնպիսի $\delta > 0$ թիվ, որ $|x - a| < \delta$ անհավասարությունը բավարարող բոլոր x-երի համար (բացի, թերևս, $x = a$ արժեքից) տեղի ունի $|f(x) - b| < \varepsilon$ անհավասարությունը: Գրվում է՝ $\lim\limits_{x \to a} f(x) = b$:

Անվերջ փոքր ֆունկցիա. $\alpha(x)$ ֆունկցիան կոչվում է անվերջ փոքր x-ը a-ին ձգտելիս, եթե $\lim\limits_{x \to a} \alpha(x) = 0$:

Ֆունկցիայի ձախակողմյան սահման և աջակողմյան սահման: Ֆունկցիայի անդընդհատություն: Սահման 1. $f(x)$ ֆունկցիան կոչվում է անընդհատ x_0 կետում, եթե՝

$$\lim_{x \to x_0} f(x) = f(x_0): \qquad (ա)$$

Սահման 2. $f(x)$ ֆունկցիան կոչվում է անընդհատ x_0 կետում, եթե ցանկացած $\varepsilon > 0$ թվի համար գոյություն ունի այնպիսի $\delta > 0$ թիվ, որ $|x - x_0| < \delta$ անհավասարությունը բավարարող բոլոր x-երի համար տեղի ունի $|f(x) - f(x_0)| < \varepsilon$ անհավասարությունը:

Սահման 3. $f(x)$ ֆունկցիան կոչվում է անընդհատ X միջակայքում, եթե այն անընդհատ է այդ միջակայքի յուրաքանչյուր x կետում:

Ցատկվող ֆունկցիա, խզման կետ. $f(x)$ ֆունկցիան կոչվում է խզվող x_0 կետում, եթե նա այդ կետում անընդհատ չէ, այսինքն՝ տեղի չունի (ա) պայմանը: Այդպիսի կետը կոչվում է ֆունկցիայի խզման կետ:

Ֆունկցիայի փոփոխության միջին արագություն. $[x_0, x] = [x_0, x_0+\Delta x]$ միջակայքի վրա ֆունկցիայի փոփոխության վրջեր արգումենտի և տարբեր ընդունած տարբեր արժեքներ: *Միջին արագություն (w)* ասում ենք $f(x)$ ֆունկցիայից x-ի մի որ ^{3} ... կյա, որ աճում է $f(x)$ տարվելով x-ի մի որ ֆունկցիայի աճման չափ կարճ, և գտնում ենք $f(x)$: *Հարկն*, որ տարբերությունների հարաբերությունը

$$\frac{\Delta f(x_0)}{\Delta x} = \frac{f(x_0+\Delta x)-f(x_0)}{\Delta x},$$

Ֆունկցիայի փոփոխության միտում. ֆունկցիայի փոփոխության մի վրջին արգումենտից տարբերության տարբերությունը անվերջ փոքրանում է, երբ x կետում գոյություն ունի (r) վերջավոր սահման, այսինքն եթե $f(x)$ ֆունկցիան այն կետում ունի ածանցյալ: Տվյալ կետում ածանցյալ ունենալու համար ֆունկցիան հոդիտ է ածանցելի այն կետում: Միշտ յուրաքանչյուր հոդիտ ածանցելի ֆունկցիան է հոդիտ ածանցելի այն մի-ջակայքում:

Ածանցյալի ֆիզիկական իմաստը (միջին արագություն). ֆունկցիայի ածանցյալը գտնելը հոդիտ է ֆունկցիայի ածանցում (*կամ՝ տարբերում*):

$$\lim_{\Delta x\to 0}\frac{\Delta f(x_0)}{\Delta x} = \lim_{\Delta x\to 0}\frac{f(x_0+\Delta x)-f(x_0)}{\Delta x} \qquad (w)$$

հոդիտ է ֆունկցիայի փոփոխության արագություն x_0 կետում:

Ածանցյալ: *Սահման:* $f(x)$ ֆունկցիայի ածանցյալ x_0 կետում հոդիտ է այն կետում ֆունկցիայի $\Delta f(x_0)$ աճի և x արգումենտի փոփոխության Δx աճի հարաբերության սահմանը Δx-ը զրոյի ձգտելիս *(այսինքն՝* w) սահմանը: *Հարկն՝* ածանցյալը ֆունկցիայի փոփոխության արագությունը է այդ կետում:

$$\lim_{\Delta x\to 0}\frac{\Delta f(x)}{\Delta x} = \lim_{\Delta x\to 0}\frac{f(x+\Delta x)-f(x)}{\Delta x};$$

Ածանցյալի ֆիզիկական իմաստը. երբ x կետում զոյություն ունի (r) վերջավոր սահման, ասում են, որ $f(x)$ ֆունկցիան այդ կետում ածանցյալ ունի: Տվյալ կետում ածանցյալ ունենալու համար ֆունկցիան հոդիտ է ածանցելի այդ կետում: Միշտ յուրաքանչյուր ածանցելի ֆունկցիան հոդիտ է ածանցելի այդ միջակայքում:

Բարդ ֆունկցիա։ Բարդ ֆունկցիայի ածանցյալը։
Ֆունկցիայի աճի գլխավոր մասը։
Ֆունկցիայի գրաֆիկի շոշափող, շոշափողի անկյունային գործակից։
Կրիտիկական կետեր (ֆունկցիայի որոշման տիրույթի ներքին այնպիսի կետեր, որտեղ ֆունկցիայի ածանցյալը հավասար է զրոյի կամ գոյություն չունի)։
Ֆունկցիայի մինիմում։ Մ ա հ մ ա ն ու մ. $f(x_0)$ արժեքը կոչվում է $f(x)$ ֆունկցիայի մինիմում, եթե գոյություն ունի x_0 կետի այնպիսի շրջակայք, որին պատկանող բոլոր x-երի համար $f(x_0) \leqslant f(x)$։ x_0-ն կոչվում է $f(x)$ ֆունկցիայի մինիմումի կետ։
Ֆունկցիայի մաքսիմում։ Մ ա հ մ ա ն ու մ. $f(x_0)$ արժեքը կոչվում է $f(x)$ ֆունկցիայի մաքսիմում, եթե գոյություն ունի x_0 կետի այնպիսի շրջակայք, որին պատկանող բոլոր x-երի համար $f(x_0) \geqslant f(x)$։ x_0-ն կոչվում է $f(x)$ ֆունկցիայի մաքսիմումի կետ։
Ֆունկցիայի էքստրեմում (ֆունկցիայի մինիմումները և մաքսիմումները կոչվում են ֆունկցիայի էքստրեմումներ, մինիմումի և մաքսիմումի կետերը՝ էքստրեմումի կետեր)։
Ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքներ միջակայքի վրա։

ԵՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՓԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

Ռադիան (*ռադիանը* $\frac{180}{\pi}$ *աստիճանին է*)։
Թվային արգումենտի սինուս և կոսինուս։ Մ ա հ մ ա ն ու մ։ Կոորդինատների սկզբնակետի շուրջը $P_0\,(1,0)$ կետի՝ α ռադիան անկյունով պտույտի դեպքում ստացվող P_α կետի օրդինատը կոչվում է α թվի սինուս (նշանակվում է՝ $sin\alpha$), իսկ աբսցիսը՝ կոսինուս (նշանակվում է՝ $cos\alpha$)։
Թվային արգումենտի տանգենս և կոտանգենս։ Մ ա հ մ ա ն ու մ. α թվի տանգենս կոչվում է այդ թվի սինուսի հարաբերությունը նույն թվի կոսինուսին՝ $\operatorname{tg}\alpha = \frac{\sin\alpha}{\cos\alpha}$։ α թվի կոտանգենս կոչվում է այդ թվի կոսինուսի հարաբերությունը նույն թվի սինուսին՝ $\operatorname{ctg}\alpha = \frac{\cos\alpha}{\sin\alpha}$։
Զույգ ֆունկցիա։ Մ ա հ մ ա ն ու մ. f-ը կոչվում է զույգ ֆունկցիա, եթե f-ի որոշման տիրույթին պատկանող x փոփոխականի յուրաքանչյուր արժեքի հետ $(-x)$ արժեքը նույնպես պատկանում է այդ ֆունկցիայի որոշման տիրույթին և $f(-x) =$

$= f(x)$, այսինքն՝ f ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող x փոփոխականի ցանկացած հակադիր արժեքների համար f ֆունկցիայի արժեքները հավասար են:

Կենտ ֆունկցիա: Սահմանում. f-ը կոչվում է կենտ ֆունկցիա, եթե f-ի որոշման տիրույթին պատկանող x փոփոխականի յուրաքանչյուր արժեքի հետ $(-x)$ արժեքը նույնպես պատկանում է այդ ֆունկցիայի որոշման տիրույթին և $f(-x) = -f(x)$, այսինքն՝ f ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող x փոփոխականի ցանկացած հակադիր արժեքների համար f ֆունկցիայի արժեքները հակադիր թվեր են:

Պարբերական ֆունկցիա: Սահմանում. f-ը կոչվում է պարբերական ֆունկցիա, եթե նրա համար գոյություն ունի այնպիսի $T \neq 0$ թիվ, որ ֆունկցիայի որոշման տիրույթին պատկանող ցանկացած x-ի դեպքում $x-T$ և $x+T$ թվերը նույնպես պատկանում են այդ տիրույթին և $f(x)=f(x+T)$: Այդ դեպքում T թիվը կոչվում է f ֆունկցիայի պարբերություն:

Հետևանք թեորեմներից:

X դասարան

ԵՌԱՆԿՅՈՒՆԱՉԱՓԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՖԻԿՆԵՐԸ

Առաջին նշանավոր սահմանը ($\lim\limits_{x\to 0} = \dfrac{\sin x}{x} = 1$ սահմանը երբեմն անվանում են «առաջին նշանավոր սահման»):

Երկրորդ ածանցյալ (f ֆունկցիայի f' ածանցյալի ածանցյալն անվանում են f ֆունկցիայի երկրորդ ածանցյալ և նշանակում f''):

Դիֆերենցիալ հավասարում (անկախ փոփոխականի ֆունկցիայի ու նրա ածանցյալների միջև կախում արտահայտող հավասարումն անվանում են դիֆերենցիալ հավասարում):

Մոնոտոն անընդհատ ֆունկցիայի հակադարձ ֆունկցիան:

Արկսինուս ($\left[-\dfrac{\pi}{2}, \dfrac{\pi}{2}\right]$ հատվածի վրա սինուսի հակադարձ ֆունկցիան անվանում են արկսինուս և նշանակում *arcsin*:

Արկկոսինուս ($[0, \pi]$ հատվածի վրա կոսինուսի հակադարձ ֆունկցիան անվանում են արկկոսինուս և նշանակում *arccos*):

Արկտանգենս ($\left]-\dfrac{\pi}{2}, \dfrac{\pi}{2}\right[$ միջակայքի վրա տանգենսի հակադարձ ֆունկցիան անվանում են արկտանգենս և նշանակում *arctg*):

Արկկոտանգենս (]0, π[միջակայքի վրա կոտանգենսի հակադարձ ֆունկցիան անվանում են արկկոտանգենս և նշանակում *arcctg*:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼ

Նախնական: Սահմանում. F ֆունկցիան կոչվում է f ֆունկցիայի նախնական ֆունկցիա (կարճ՝ նախնական) տվյալ միջակայքի վրա, եթե այդ միջակայքի բոլոր x-երի համար $F'(x) = f(x)$:

Նախնականի ընդհանուր տեսք:

Նախնականի ածը:

Սեղանակերպ (կորագիծ սեղան): Սեղանակերպի մակերեսը:

Ինտեգրալ: Սահմանում. f ֆունկցիայի ինտեգրալ a-ից մինչև b կոչվում է

$$\sum_n (a,b) = \sum_{k=1}^{n} f(x_{k-1})\Delta x_k$$

տեսքի գումարների ընդհանուր սահմանը բոլոր $x_k - x_{k-1} = \Delta x_k$-երը զրոյի ձգտելիս, որտեղ $x_0 = a$, $x_n = b$, իսկ $x_k (k = 1,2, \dots, n-1)$ ցանկացած կետեր են $]a, b[$ միջակայքում: *Նշանակվում է՝*

$$\int_a^b f(x)dx:$$

Ինտեգրման սահմաններ: Ինտեգրալի ստորին սահման և վերին սահման: Ինտեգրալի նշան: Ընդինտեգրալ ֆունկցիա: Ինտեգրման փոփոխական: Ինտեգրման միջակայք:

Նյուտոնի-Լայբնիցի բանաձևը:

Ինտեգրում: Ինտեգրալի հաշվում:

Ինտեգրալ՝ փոփոխական վերին սահմանով:

ՑՈՒՑԱՉԱՅԻՆ, ԼՈԳԱՐԻԹՄԱԿԱՆ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

Ցուցչային ֆունկցիա՝ a դրական հիմքով a^x ցուցչային ֆունկցիան նաիս սահմանված է x-ի ամբողջ և կոտորակային արժեքների համար

$\left(a^n = \underbrace{a\cdot a\cdots a}_{n},\ a^{-n} = \frac{1}{a_n},\ a^{\frac{p}{q}} = \sqrt[q]{a^p}\right)$, *և ապա ապացուցվում է, որ՝*

ցանկացած a դրական թվի համար գոյություն ունի ամբողջ թվային ուղղի վրա որոշված մեկ և միայն մեկ ֆունկցիա, որը $a>1$ դեպքում աճող է, $0<a<1$ դեպքում նվազող է, և արգումենտի բոլոր $x=\frac{p}{q}$ ռացիոնալ արժեքների դեպքում ընդունում է $a^{\frac{p}{q}}$ արժեքները: Այդ ֆունկցիան անվանում են ցուցչային ֆունկցիա և նշանակում՝ a^x, կամ անվանում են էքսպոնենտ (բառացի՝ ցուցիչ) և նշանակում՝ $exp_a(x)$:

Լոգարիթմական ֆունկցիա. $a\neq 1$ դեպքում a^x ցուցչային ֆունկցիայի հակադարձ ֆունկցիան անվանում են լոգարիթմական ֆունկցիա և նշանակում՝ $log_a x$:

e *թիվը: 1.* գոյություն ունի 2-ից մեծ և 3-ից փոքր այնպիսի թիվ (այն նշանակում են e տառով), որ e^x ցուցչային ֆունկցիան 0 կետում ունի 1-ի հավասար ածանցյալ՝ $\lim\limits_{x\to 0}\frac{e^x-1}{x}=1$:

2. e թիվը սահմանվում է նաև որպես $u_n=\left(1+\frac{1}{n}\right)^n$ հաջորդականության սահման, որի գոյությունը ապացուցվում է՝

$$e=\lim_{n\to\infty}\left(1+\frac{1}{n}\right)^n;$$

Բնական լոգարիթմ. e հիմքով լոգարիթմն անվանում են բնական լոգարիթմ և նշանակում՝ ln, այսինքն՝ $ln x = log_e x$:

Ատոմճանապին ֆունկցիա:

Իռացիոնալ հավասարում (հավասարում, որի մեջ փոփոխականը գտնվում է արմատանշանի տակ):

Հավասարման կողմնակի արմատ:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Համարժեք հավասարումներ. երկու հավասարումներ կոչվում են համարժեք, եթե նրանք ունեն լուծումների միևնույն բազմությունը:

Հավասարումների համակարգ (հավասարումների համակարգը հավասարումների վերջավոր բազմություն է).

Հավասարումների համակարգի լուծում (երկու փոփոխականներով հավասարումների համակարգի լուծում անվանում են այն կարգավորյալ թվազույգը, որը համակարգի հավասարումներից յուրաքանչյուրի լուծումն է):

Հավասարումների համակարգի լուծումների բազմություն (հավասարումների համակարգի լուծումների բազմությունը այդ համակարգի հավասարումների լուծումների բազմությունների հատումն է):

Հավասարումների համարժեք համակարգեր. հավասարումների երկու համակարգեր կոչվում են համարժեք, եթե նրանք ունեն լուծումների միևնույն բազմությունը:

Գծային հավասարում. x_1, x_2, ... , x_n փոփոխականներով գծային հավասարում կոչվում է $a_1x_1 + a_2x_2 + \dots + a_nx_n = b$ տեսքի հավասարումը:

Հավասարումների եռանկյուն համակարգ:

Գաուսի մեթոդը. գծային հավասարումների համակարգը եռանկյուն տեսքի բերելու միջոցով լուծելու մեթոդը կոչվում է Գաուսի մեթոդ:

Անհավասարություն: Անհավասարումների համակարգ:

Անհավասարությունների համակարգի լուծում. եթե տրված է անհավասարությունների համակարգ՝

$$\begin{cases} f(x, y) > 0, \\ g(x, y) > 0, \end{cases}$$

ապա այդ համակարգի լուծում կոչվում է այն կարգավորյալ թվազույգը, որը բավարարում է այդ համակարգի յուրաքանչյուր անհավասարությանը: Ուրեմն՝ համակարգի լուծումների բազմությունը այդ համակարգի անհավասարությունների լուծումների բազմությունների հատումն է:

Գծային ծրագրավորում: Գծային ծրագրավորման խնդիրներ:

ՆՑՈՒԹԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բազմանդամ, բազմանդամ տարրեր. որոշ առարկաների համախումբը անվանում են բազմություն, իսկ այդ առարկաները՝ ավյալ բազմության տարրեր:

Ենթաբազմություն: Բազմությունների միավորում և հատում: Դատարկ բազմություն:

Իրական թվերի բազմություն. իրական թվերի բազմությունը ռացիոնալ թվերի բազմության և իռացիոնալ թվերի բազմության միավորումն է:

Թվաբանական գործողությունների հիմնական օրենքները և անհավասարությունների հատկությունները:

Երկու թվերի թվաբանական միջին (a և b թվերի թվաբանական միջին անվանում են $\frac{a+b}{2}$ թիվը):

Երկու թվերի երկրաչափական միջին ($a>0$ և $b>0$ թվերի երկրաչափական միջին անվանում են $\sqrt{a\cdot b}$ թիվը):

Ուղիղ համեմատականություն (y փոփոխականն անվանում են ուղիղ համեմատական x փոփոխականին՝ k համեմատականության գործակցով, եթե այդ փոփոխականների համապատասխան արժեքները կապված են $y=kx$ առնչությամբ, որտեղ k-ն զրոյից տարբեր որոշ իրական թիվ է):

Հակադարձ համեմատականություն (y փոփոխականն անվանում են հակադարձ համեմատական x փոփոխականին, եթե այդ փոփոխականների համապատասխան արժեքները կապված են $y=\frac{k}{x}$ առնչությամբ, որտեղ k-ն զրոյից տարբեր որոշ իրական թիվ է: k թիվն անվանում են հակադարձ համեմատականության գործակից):

Հիպերբոլ. $y=\frac{k}{x}$ ֆունկցիայի գրաֆիկը կոչվում է հիպերբոլ: Հիպերբոլ են անվանում յուրաքանչյուր կոր, որն ստացվում է $y=\frac{k}{x}$ ֆունկցիայի գրաֆիկից՝ տեղափոխությունների և առանցքների նկատմամբ սեղմումների միջոցով:

Գծային ֆունկցիա. գծային ֆունկցիա է կոչվում $y=kx+b$ տեսքի ֆունկցիան, որտեղ k-ն և b-ն որոշ թվեր են:

Քառակուսային ֆունկցիա, քառակուսի եռանդամ. $y=ax^2+bx+c$ ֆունկցիան, որտեղ a-ն, b-ն, c-ն որոշ իրական թվեր են ($a\neq 0$), կոչվում է քառակուսային ֆունկցիա, իսկ ax^2+bx+c արտահայտությունը՝ քառակուսի եռանդամ:

Քառակուսի եռանդամի տարբերիչ (դիսկրիմինանտ). $D=b^2-4ac$ արտահայտությունն անվանում են քառակուսի եռանդամի տարբերիչ:

Քառակուսի հավասարում (քառակուսի հավասարում են անվանում $ax^2+bx+c=0$ տեսքի հավասարումը $a\neq 0$ դեպքում):

Քառակուսային ֆունկցիայի գրաֆիկը, պարաբոլ:

Թվային հարթության սեղմում և ձգում. թվային հարթության $(x, y) \to (x, ky)$ արտապատկերումն իր վրա $0 < k < 1$ դեպքում կոչվում է սեղմում դեպի ox առանցքը $1:k$ հարաբերությամբ, իսկ $k > 1$ դեպքում՝ ձգում ox առանցքից $1:k$ հարաբերությամբ:

Թվային հարթության $(x, y) \to (kx, y)$ արտապատկերումն իր վրա $0 < k < 1$ դեպքում կոչվում է սեղմում դեպի oy առանցքը $1:k$ հարաբերությամբ, իսկ $k > 1$ դեպքում՝ ձգում oy առանցքից $1:k$ հարաբերությամբ:

Ընդունված է «սեղմում» և «ձգում» տերմիններըչ օգտագործել և երկու դեպքում էլ ասել՝ սեղմում ox առանցքի (կամ oy առանցքի) նկատմամբ $1:k$ հարաբերությամբ:

Ֆունկցիայի գրաֆիկի սեղմում կոորդինատային առանցքի նկատմամբ. $y = kf(x)$ ֆունկցիայի գրաֆիկն ստացվում է $y = f(x)$ ֆունկցիայի գրաֆիկից՝ աբսցիսների առանցքի նկատմամբ $1:k$ հարաբերությամբ սեղմումով ($0 < k < 1$ դեպքում՝ սեղմում դեպի ox առանցքը, $k > 1$ դեպքում՝ ձգում ox առանցքից):

$y = f\left(\frac{x}{k}\right)$ ֆունկցիայի գրաֆիկն ստացվում է $y = f(x)$ ֆունկցիայի գրաֆիկից՝ օրդինատների առանցքի նկատմամբ $1:k$ հարաբերությամբ սեղմումով:

IX—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

IX դասարան

ՏԱՐԱԾԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՔՍԻՈՄՆԵՐԸ: ՉՈՒԳԱՀԵՌՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կետ: Ուղիղ: Հարթություն: Հեռավորություն: Բազմություն:

Պատկեր (երկրաչափության մեջ կետերի յուրաքանչյուր բազմություն անվանում են երկրաչափական պատկեր, կարճ՝ պատկեր):

Տարածություն (տարածաչափությունում դիտարկվող բոլոր կետերի բազմությունն անվանում են տարածություն):

Հատվող հարթություններ. երկու հարթություններ, որոնց հատումը ուղիղ է, կոչվում են հատվող հարթություններ:

Հատվող ուղիղներ. երկու ուղիղներ, որոնք ունեն մեկ ընդհանուր կետ, կոչվում են հատվող ուղիղներ:

Զուգահեռ ուղիղներ: Սահմանում: Երկու ուղիղներ կոչվում են զուգահեռ, եթե նրանք գտնվում են մեկ հարթության մեջ և ընդհանուր կետ չունեն կամ համընկնում են:

Բաց կիսատարածություն:

Փակ կիսատարածություն (բաց կիսատարածության և նրա եզրի միավորումն անվանում են փակ կիսատարածություն, կամ պարզապես՝ կիսատարածություն):

Ուռուցիկ պատկեր (պատկերը կոչվում է ուռուցիկ, եթե այն պարունակում է իր ցանկացած երկու կետերը միացնող հատվածը):

Քառանիստ (տետրաէդր): Բազմանիստի հատույթ:

Խաչվող ուղիղներ: Սահմանում: Երկու ուղիղներ կոչվում են խաչվող, եթե նրանք չեն հատվում և զուգահեռ չեն:

Ուղղի և հարթության զուգահեռությունը: Սահմանում: Ուղիղը և հարթությունը կոչվում են զուգահեռ, եթե նրանք ընդհանուր կետ չունեն կամ ուղիղը գտնվում է հարթության մեջ:

Զուգահեռ ուղիղների խումբ: Զուգահեռանիստ: Ուղղանկյուն զուգահեռանիստ:

Զուգահեռ հարթություններ: Սահմանում: Երկու հարթություններ կոչվում են զուգահեռ, եթե նրանք ընդհանուր կետ չունեն կամ համընկնում են:

Զուգահեռ պրոյեկտում:

Կետի զուգահեռ պրոյեկցիա:

Պատկերի զուգահեռ պրոյեկցիա (Φ պատկերի զուգահեռ պրոյեկցիա անվանում են այդ պատկերի բոլոր կետերի զուգահեռ պրոյեկցիաների Φ_1 բազմությունը):

Պատկերի պատկերում (տարածաչափությունում պատկերի (սկզբնապատկերի) պատկերում անվանում են ցանկացած պատկեր, որը նման է տրված պատկերի զուգահեռ պրոյեկցիային որևէ հարթության վրա):

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՎԵԿՏՈՐՆԵՐ

Տարածության տեղափոխություն. տարածության՝ հետավորությունները պահպանող արտապատկերումն իր վրա, անվանում են տարածության տեղափոխություն:

O կետի նկատմամբ համաչափ (սիմետրիկ) կետեր. M և M_1 կետերը կոչվում են O կետի նկատմամբ համաչափ կետեր, եթե O կետը MM_1 հատվածի միջակետն է:

Տարածության կենտրոնահամաչափություն: Համաչափության կենտրոն: Կենտրոնահամաչափ պատկեր:

Ուղղորդված հատված A սկզբով և B ծայրով: Զուգահեռ տեղափոխում: Սահմանում: Զուգահեռ տեղափոխում AB ուղղորդված հատվածի չափ անվանում են տարածության այնպիսի արտապատկերումն իր վրա, որի դեպքում յուրաքանչյուր M կետ արտապատկերվում է այնպիսի M_1 կետի, որ MM_1 և AB ուղղորդված հատվածները համուղղված են և ունեն հավասար երկարություններ:

Վեկտոր: Վեկտորի ուղղություն և երկարություն: Զրո վեկտոր: Համուղղված և հակուղղված վեկտորներ: Համագիծ և տարագիծ վեկտորներ: Հակադիր վեկտորներ: Վեկտորի տեղադրում տրված կետից (վեկտորի կիրառում տրված կետում): (Հարթաչափություններում դիտարկվող վեկտորների համար այս հասկացությունների սահմանումները, որոնք բերված են VII դասարանի դասընթացում, պահպանվում են նաև տարածաչափություններում դիտարկվող վեկտորների համար: Հիշեցնենք, միայն, որ վեկտորը կարելի է սահմանել կամ որպես ուղղորդված հատված, կամ որպես զուգահեռ տեղափոխում):

Վեկտորների գումար: Վեկտորների տարբերություն: Վեկտորի բազմապատկում թվով (հարթաչափություններում դիտարկվող վեկտորների համար այս գործողությունների՝ VII դասարանում տրված սահմանումները նույնպես պահպանվում են տարածաչափություններում դիտարկվող վեկտորների համար):

Երկու վեկտորների գումարման եռանկյան կանոնը ($\overrightarrow{AB} + \overrightarrow{BC} = \overrightarrow{AC}$):

Երկու վեկտորների գումարման զուգահեռակողմի կանոնը ($\overrightarrow{OA} + \overrightarrow{OB} = \overrightarrow{OC}$, որտեղ OC հատվածը OA և OB կողմերով զուգահեռակողմի անկյունագիծն է):

Վեկտորների հանման բանաձևը ($\overrightarrow{OB} - \overrightarrow{OA} = \overrightarrow{AB}$):

Մի քանի վեկտորների գումարման բազմանկյան կանոնը:

$$\vec{c} = x\vec{a} + y\vec{b}$$

Խնդիր: Տարածության վեկտորներ $(\vec{a}, \vec{b})$ գոյզը սեփական է $\vec{b}$ վեկտորների համար, իսկ $\vec{c}$ վեկտորը՝ այդ գոյզին չպատկանող վեկտոր է: Ապացուցել, որ $\vec{a}$ վեկտորի կարելի է ընդհանուր կերպով գտնել միայն մեկ եղանակով:

Լուծում (ուղղանկյուն վեկտորներ): Ենթադրենք, որ $\vec{a}$ վեկտորը ունի (x, y) կոորդինատներ, իսկ $\vec{b}$ և $\vec{c}$ վեկտորները՝ համապատասխանաբար (x_1, y_1) և (x_2, y_2) կոորդինատներ: Այդ դեպքում $\vec{a}$ վեկտորի կոորդինատները կարելի է գտնել հետևյալ հավասարումներից.

$$\begin{cases} x = x_1 \\ y = y_1 \end{cases}$$

Լուծում (ոչ ուղղանկյուն վեկտորներ): Ենթադրենք, որ $\vec{a}$ վեկտորի կոորդինատները (x, y) են, իսկ $\vec{b}$ և $\vec{c}$ վեկտորների կոորդինատները համապատասխանաբար (x_1, y_1) և (x_2, y_2) են: Այդ դեպքում $\vec{a}$ վեկտորի կոորդինատները կարելի է գտնել հետևյալ հավասարումներից.

$$\begin{cases} x = x_1 \\ y = y_1 \end{cases}$$

Ենթադրենք $\vec{a}$ վեկտորը ունի (x, y) կոորդինատներ, իսկ $\vec{b}$ և $\vec{c}$ վեկտորների կոորդինատները համապատասխանաբար (x_1, y_1) և (x_2, y_2) են: Այդ դեպքում $\vec{a}$ վեկտորի կոորդինատները կարելի է գտնել հետևյալ հավասարումներից.

$$\begin{cases} x = x_1 \\ y = y_2 \end{cases}$$

Խնդիր: Տարածության վեկտորներ $(\vec{a}, \vec{b})$ գոյզը սեփական է $\vec{b}$ վեկտորների համար, իսկ $\vec{c}$ վեկտորը՝ այդ գոյզին չպատկանող վեկտոր է: Ապացուցել, որ $\vec{a}$ վեկտորի կարելի է գտնել միայն մեկ եղանակով:

Լուծում (ուղղանկյուն վեկտորներ): Ենթադրենք, որ $\vec{a}$ վեկտորը ունի (x, y) կոորդինատներ, իսկ $\vec{b}$ և $\vec{c}$ վեկտորների կոորդինատները համապատասխանաբար (x_1, y_1) և (x_2, y_2) են: Այդ դեպքում $\vec{a}$ վեկտորի կոորդինատները կարելի է գտնել հետևյալ հավասարումներից.

$$\begin{cases} x = x_1 \\ y = y_2 \end{cases}$$

Լուծում (ոչ ուղղանկյուն վեկտորներ): Ենթադրենք, որ $\vec{a}$ վեկտորի կոորդինատները (x, y, z) են, իսկ $\vec{b}$, $\vec{c}$ և $\vec{d}$ վեկտորների կոորդինատները համապատասխանաբար (x_1, y_1, z_1), (x_2, y_2, z_2) և (x_3, y_3, z_3) են: Այդ դեպքում $\vec{a}$ վեկտորի կոորդինատները կարելի է գտնել հետևյալ հավասարումներից.

$$\vec{d} = x\vec{a} + y\vec{b} + z\vec{c}$$

Խնդիր: Տարածության վեկտորներ $(\vec{a}, \vec{b}, \vec{c})$ նույնը պահպանում են զույգ վեկտորների զույգերի միջև ընկած հատկությունը, իսկ զրոյական վեկտորը՝ $\vec{d}$ վեկտորի վեկտոր ընտրյալը $(\vec{a}, \vec{b}, \vec{c})$ զույգ:

Երեք տարբեր վեկտորների գումարման բազմահատկության կանոնը ($\overrightarrow{OA} + \overrightarrow{OB} + \overrightarrow{OC} = \overrightarrow{OD}$, *որտեղ* OD *հատվածը* OA, OB, OC *կողերով բազմանիստի անկյունագիծն է*)։

Երկու ոչզրոյանների կազմած անկյուն (երկու ուղղությունների կազմած անկյուն անվանում են բնդհանուր սկիզբ և այդ ուղղություններն ունեցող ցանկացած երկու ճառագայթներով կազմված երկու անկյուններից՝ փոքր անկյան մեծությունը)։

Երկու ոչ զրոյական վեկտորների կազմած անկյուն. Ուղղահայաց վեկտորներ. երկու ոչ զրոյական վեկտորների կազմած անկյուն կոչվում է այդ վեկտորների ուղղություններով կազմված անկյունը։ Երկու համուղղված վեկտորների կազմած անկյունը համարվում է հավասար 0°-ի, իսկ հակուղղված վեկտորների կազմած անկյունը՝ 180°-ի։

Եթե $\vec{a}$ և $\vec{b}$ վեկտորների կազմած անկյունը հավասար է 90°-ի, ապա այդ վեկտորներն ուղղահայաց են կամ գրում՝ $\vec{a} \perp \vec{b}$)։

Երկու հատվող ուղիղների կազմած անկյուն (երկու հատվող ուղիղների կազմած անկյուն անվանում են այդ ուղիղներով որոշվող անկյունների՝ փոքրի մեծությունը)։

Երկու խաչվող ուղիղների կազմած անկյուն. երկու խաչվող ուղիղների կազմած անկյուն կոչվում է երկու այնպիսի հատվող ուղիղների կազմած անկյունը, որոնք համապատասխանաբար զուգահեռ են տրված խաչվող ուղիղներին։ Եթե երկու ուղիղներ զուգահեռ են, ապա նրանց կազմած անկյունը համարվում է հավասար 0°-ի։

Փոխուղղահայաց ուղիղներ (երկու ուղիղներ անվանում են փոխուղղահայաց, եթե նրանց կազմած անկյունը հավասար է 90°-ի)։

Երկու վեկտորների սկալյար արտադրյալ. Սահմանում. երկու ոչ զրոյական վեկտորների սկալյար արտադրյալ կոչվում է այդ վեկտորների երկարությունների և վեկտորների կազմած անկյան կոսինուսի արտադրյալը։ Եթե երկու վեկտորներից բենուզ մեկը զրոյական վեկտոր է, ապա այդ վեկտորների սկալյար արտադրյալն ընդունվում է հավասար զրոյի։

Վեկտորի սկալյար քառակուսի ($\vec{a} \cdot \vec{a}$ արտադրյալը գրում են $\vec{a}^2$ և անվանում $\vec{a}$ վեկտորի սկալյար քառակուսի)։

Մուտք և հաշիչ ապարատներ։ Մահճակալ։ Մուտքը և հարթությունը կազմում են փոխուղղահայաց, երբ ապարատ հարթության ձեռք տալիս կարելի է:

Հարթության ուղղահայաց տարածություն։ Տարածությունը M և M_1 կետերը կազմում են α հարթության եկատորիալ հատվածի վերևում, երբ MM_1 հատվածը β և α հարթությունների հետ կազմում է:

Հարթության ուղղահայաց (հարթությանը ուղղահայաց ուղիղ կարելի է անցկացնել միայն մեկ հարթություն):

Հարթության թեք (հարթությունը հատող, բայց որ ուղղահայաց չի անցնում եկատորիալ հարթությունը):

Ուղղանկյուն (օրթոգոնալ) պրոյեկցիա։

Ուղղանկյուն (օրթոգոնալ) պրոյեկցիայի գծագրություններ։

Ուղղի վրա հատվածի պրոյեկցիա։ Տարածության M և M_1 կետերը պրոյեկտում են ուղղի վրա հատվածի A և B պրոյեկցիաների վրա, այսինքն A և B կետերի միջով անցկացնում ենք հարթություններ, որոնք ուղղին ուղղահայաց են։ Տարածության ուղղի վրա հատվածի պրոյեկցիա։ այն հատվածն է, որ ծայրերը գտնվում են նրան տարված ուղղահայաց հարթությունների միջև։

դիղճերի ընդհանուր ուղղահայաց: *Այդ հատվածի երկարությունը* *թեքով և հարթությամբ կազմված անկյուն: Սահմանում:* Թեքով և հարթությամբ կազմված անկյուն կոչվում է թեքով և հարթության վրա իր պրոյեկցիայով կազմված անկյունը: *Փոխուղղահայաց հարթություններ:* Երկու հարթություններ կոչվում են փոխուղղահայաց հարթություններ, եթե երրորդը ուղղահայաց է մյուսի որևէ ուղղահայաց:

X դասարան

ԵՐԿՆԻՍՏ ԵՎ ԲԱԶՄԱՆԻՍՏ ԱՆԿՅՈՒՆՆԵՐ: ԲԱԶՄԱՆԻՍՏԵՐ

Տարածական տիրույթ: Տարածական տիրույթի եզր. պատկերը (կետերի բազմությունը) անվանում են տարածական տիրույթ, եթե այն օժտված է հետևյալ հատկություններով.

1) պատկերի ցանկացած երկու կետեր կարելի է միացնել համապողջությամբ այդ պատկերում գտնվող հատվածով կամ բեկյալով,

2) իր ցանկացած կետի հետ միասին պատկերը պարունակում է այդ կետում կենտրոն ունեցող թեկուզ մեկ գունդ:

Տարածական տիրույթի եզր անվանում են այնպիսի կետերի ոչ դատարկ բազմությունը, որոնցից յուրաքանչյուրի համար այդ կետում կենտրոն ունեցող ցանկացած գունդ պարունակում է ինչպես ավյալ տարածական տիրույթին պատկանող, այնպես էլ նրան չպատկանող կետեր:

Կիսատարածություն. յուրաքանչյուր α հարթություն տարածության՝ այդ հարթությանը չպատկանող բոլոր կետերի բազմությունը տրոհում է երկու տարածական տիրույթների, որոնց համար α հարթությունը ընդհանուր եզր է: Այդ տիրույթներից յուրաքանչյուրի և α եզրի միավորումը կոչվում է կիսատարածություն:

Երկնիստ անկյուն: Սահմանում: Ընդհանուր եզր ունեցող երկու կիսահարթությունների և նրանցով սահմանափակված տարածական տիրույթներից մեկի միավորումը անվանում են երկնիստ անկյուն:

Երկնիստ անկյան նիստեր, կող և ներքին կետեր. երկնիստ անկյունը սահմանափակող կիսահարթությունները անվանում են այդ

90°-ի:

Բազմանկյան տեսակետ. Դիցուք տրված են $A_1\ A_2\ \dots\ A_{n-1}\ A_n$ հարթ պարզ բեկյալը և ցրա հարթությանը չպատկանող S կետը: S կետից եկող ամբողջությամբ ուսումնասիրած հարթ անցող ճառագայթների մասին ինչպես նաև բազմանկյան ներքին բազմությունը տրված լինելու դեպքում կարելի է բերել հետևյալ տիպական խնդիրները՝ որոշել բազմանկյան տրված կետի դիրքը, գտնել S կետից տրված հեռավորությամբ գտնվող կետերի երկրաչափական տեղը և այլն:

Բազմանկյան տեսակի գաղափար. Բազմանկյան անկյուններից մեկի գագաթը կոչվում է նրա **գագաթ**, իսկ նրա կողմերից յուրաքանչյուրը՝ **կողմ**:

Բազմանկյան տեսակները՝ ըստ կողմերի քանակի. Բազմանկյան անկյունների քանակը կարող է լինել ոչ պակաս երեքից, ուստի և նրա կողմերի քանակը ևս ոչ պակաս երեքից: Ամենափոքր քանակ կողմ ունեցող բազմանկյունը կոչվում է **եռանկյուն**, չորս կողմ ունեցողը՝ **քառանկյուն**, հինգ կողմ ունեցողը՝ **հնգանկյուն** և այլն: Ընդհանրապես n կողմ ունեցող բազմանկյունը կոչվում է **n-անկյուն**:

Ուռուցիկ և ոչ ուռուցիկ բազմանկյուններ. Բազմանկյունը կոչվում է **ուռուցիկ**, եթե նրա կից կողմերով անցնող ուղիղներից ոչ մեկը չի հատում նրա ոչ մի կողմը: Ուռուցիկ չլինող բազմանկյունը կոչվում է **ոչ ուռուցիկ**:

Բազմանկյան տեսակները՝ ըստ ինքնահատման կամ ինքնահատումների բացակայության. Բազմանկյունը կոչվում է **պարզ**, եթե նրա կողմերից ոչ մի զույգ չունի ընդհանուր կետ, որը չի հանդիսանում հարևան կողմերի ընդհանուր կետ: Պարզ չլինող բազմանկյունը կոչվում է **ինքնահատվող**:

Բազմանկյան տեսակները՝ ըստ կողմերի հարաբերական դիրքի. Բազմանկյունը կոչվում է **ուղղանկյուն**, եթե նրա բոլոր անկյունները ուղիղ են: Ուղղանկյունը, որի բոլոր կողմերը հավասար են, կոչվում է **քառակուսի**: Ուղղանկյունը, որի հարևան կողմերը հավասար են, կոչվում է **շեղանկյուն**: Շեղանկյունը, որի անկյուններից մեկը ուղիղ է, կոչվում է **շեղանկյունի**:

Մաբմնի եզրը այլ կերպ անվանում են մաբմնի մակերևույթ, իսկ ապաձակաև սիրույթը՝ մաբմնի ներքին սիրույթ:

Բազմանիստ: Սահմանում: Բազմանիստ են անվանում այնպիսի մաբմիները, որի մակերևույթը վերջավոր թվով հարթ բազմանկյունների միավորում է:

Բազմանիստի նիստեր, կողեր և գագաթներ:

Բազմանիստի անկյունագիծ. բազմանիստի՝ միևնույն նիստին չպատկանող երկու գագաթներ միացնող հատվածը անվանում են բազմանիստի անկյունագիծ:

Ուռուցիկ և ոչ ուռուցիկ բազմանիստներ (բազմանիստ առելով սովորաբար հասկանում ենք ուռուցիկ բազմանիստ):

Բազմանիստի մակերևույթի փոխածք:

Պրիզմա: Սահմանում: Այնպիսի բազմանիստը, որի երկու նիստերը զուգահեռ հարթություններում գանվող համանուն բազմանկյուններ են և որի՝ այդ հարթություններում չգանվող կողերը զուգահեռ են, կոչվում է հավասարակողմ (պրիզմա):

Պրիզմայի հիմքեր, կողմնային նիստեր, կողմնային կողեր, բարձրություն, կողմնային մակերևույթ և անկյունագծային հատույթ:

Ուղիղ պրիզմա. այնպիսի պրիզման, որի կողմնային կողերը ուղղահայաց են հիմքերի հարթություններին, կոչվում է ուղիղ պրիզմա:

Թեք պրիզմա (եթե պրիզմայի կողմնային կողերը հիմքերի հարթություններին ուղղահայաց չեն, ապա այն անվանում են թեք պրիզմա):

Կանոնավոր պրիզմա. այնպիսի ուղիղ պրիզման, որի հիմքը կանոնավոր բազմանկյուն է, կոչվում է կանոնավոր պրիզմա:

Զուգահեռանիստ. Սահմանում: Զուգահեռանիստ է կոչվում այնպիսի պրիզման, որի հիմքը զուգահեռակողմ է:

Ուղիղ զուգահեռանիստ. եթե զուգահեռանիստի կողմնային կողերը ուղղահայաց են հիմքի հարթությանը, ապա այն կոչվում է ուղիղ զուգահեռանիստ:

Ուղղանկյուն զուգահեռանիստ. ուղիղ զուգահեռանիստը, որի հիմքն ուղղանկյուն է, կոչվում է ուղղանկյուն զուգահեռանիստ:

Ուղղանկյուն զուգահեռանիստի չափումներ. ուղղանկյուն զուգահեռանիստի մեկ գագաթից ելնող երեք կողերի երկարությունները կոչվում են ուղղանկյուն զուգահեռանիստի չափումներ:

Խորանարդ. հավասար չափումներ ունեցող ուղղանկյուն զուգահեռանիստը կոչվում է խորանարդ:

Ֆունկցիայի տարբերությունը և դիֆերենցելիությունը։ Ֆունկցիայի տարբերությունը կախված է կետի ընտրությունից և արգումենտի աճից։ Եթե $f(x)$ ֆունկցիան ունի x կետում վերջավոր ածանցյալ, ապա $\Delta f(x)$ տարբերությունը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$\Delta f(x) = f'(x)\Delta x + \alpha\Delta x,$$

որտեղ α-ն Δx-ի նկատմամբ անվերջ փոքր մեծություն է։ Այսպիսով, ֆունկցիայի տարբերությունը կազմված է երկու անդամներից. առաջինը Δx-ի նկատմամբ առաջին կարգի անվերջ փոքր է, իսկ երկրորդը՝ Δx-ի նկատմամբ ավելի բարձր կարգի անվերջ փոքր է։ Առաջին անդամը կոչվում է ֆունկցիայի դիֆերենցիալ։

Դիֆերենցելի ֆունկցիա։ Ֆունկցիան կոչվում է դիֆերենցելի տվյալ կետում, եթե նրա աճի համապատասխան տարբերությունը կարելի է ներկայացնել վերջավոր թվով անդամների գումարի տեսքով, որոնցից մեկը Δx-ի նկատմամբ առաջին կարգի անվերջ փոքր է, իսկ մյուսները՝ ավելի բարձր կարգի անվերջ փոքրեր։

Դիֆերենցելիության անհրաժեշտ պայմանը։ Ֆունկցիան դիֆերենցելի է տվյալ կետում, եթե այդ կետում նրա ածանցյալը վերջավոր թիվ է։

Դիֆերենցելիության բավարար պայմանը։ Ֆունկցիան դիֆերենցելի է տվյալ կետում, եթե այդ կետում նրա ածանցյալը վերջավոր թիվ է։

Ֆունկցիայի դիֆերենցիալի երկրաչափական իմաստը։ Ֆունկցիայի դիֆերենցիալը հավասար է կորի տրված կետում տարված շոշափողի օրդինատի աճին։

ՓՈՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Փոփոխական մեծություն։ Մեծությունը, որն ընդունում է տարբեր թվային արժեքներ, կոչվում է փոփոխական մեծություն։

Փոփոխականի տիրույթ։ Փոփոխականի տիրույթ է կոչվում այն թվային բազմությունը, որի տարրերից յուրաքանչյուրը կարող է լինել փոփոխականի արժեք։

Ֆունկցիա։ Եթե X և Y երկու թվային բազմություններ են, և X-ի յուրաքանչյուր x տարրի համապատասխանության մեջ դրված է Y-ի որոշակի y տարր, ապա ասում են, որ y-ը x-ի ֆունկցիա է։ Գրվում է $y = f(x)$։ x-ը կոչվում է անկախ փոփոխական կամ արգումենտ, y-ը՝ կախյալ փոփոխական։ X բազմությունը կոչվում է ֆունկցիայի որոշման տիրույթ, Y-ը՝ արժեքների տիրույթ։

Ֆունկցիայի որոշման տիրույթ։ Ֆունկցիայի որոշման տիրույթ է կոչվում այն բազմությունը, որի վրա տրված է ֆունկցիան։

Ֆունկցիայի արժեքների տիրույթ։ Ֆունկցիայի արժեքների տիրույթ է կոչվում այն բազմությունը, որի տարրերն են ֆունկցիայի բոլոր հնարավոր արժեքները։

Գլան։ Սահմանում։ Ուղղանկյունը իր կողմը պարուրացակող առացքի շուրջը պտտելով առաջացած մարմինը կոչվում է գլան։

Գլանի հիմքեր, կողմնային մակերևույթ, ծնորդ, բարձրություն։ Գլանի մակերևույթի փուաժք։

Կոն։ Սահմանում։ Ուղղանկյուն եռանկյունը իր էջը պարուրացակող առացքի շուրջը պտտելով առաջացած մարմինը կոչվում է կոն։

Կոնի հիմք, կողմնային մակերևույթ, ծնորդ, բարձրություն։ Կոնի մակերևույթի փուաժք։

Հատած կոն։

Գունդ։ Սահմանում։ Տարածության բոլոր այն կետերի բազմությունը, որոնց հեռավորությունը՝ տրված O կետից մեծ չէ որևէ տրված R դրական թվից, կոչվում է O կենտրոնով և R շառավղով գունդ։

Գնդային մակերևույթ (սֆերա)։ Սահմանում։ Տարածության բոլոր այն կետերի բազմությունը, որոնց հեռավորությունը որևէ տրված O կետից հավասար է տրված R դրական թվին, կոչվում է O կենտրոնով և R շառավղով գնդային մակերևույթ։ Այլ կերպ՝ գնդի եզրը անվանում են գնդային մակերևույթ։

Գունդը պտտման մարմին է, որն առաջանում է կիսաշրջանը իր տրամագիծը պարուրացակող առացքի շուրջը պտտելով, իսկ գնդային մակերևույթը՝ պտտման մակերևույթ է, որն առաջանում է կիսաշրջանագիծը նույն առացքի շուրջը պտտելով։

Գնդի և գնդային մակերևույթի շառավիղ (գնդի և գնդային մակերևույթի շառավիղ անվանում են ինչպես գնդային մակերևույթի կետերի R հեռավորությունը O կենտրոնից, այնպես էլ գնդային մակերևույթի ցանկացած M կետը O կենտրոնին միացնող OM հատվածը)։

Գնդի և գնդային մակերևույթի լար և տրամագիծ։

Գնդի և գնդային մակերևույթի հարթ հատումներ։ Մեծ շրջան և մեծ շրջանագիծ։

Գնդի ներքին կետեր (գնդի այն բոլոր կետերը, որոնք չեն պատկանում նրա մակերևույթին, անվանում են գնդի ներքին կետեր)։

Գնդային մակերևույթի և գնդի շոշափող հարթություն։ Սահմանում։ Գնդային մակերևույթի հետ մեկ ընդհանուր կետ ունեցող հարթությունը կոչվում է գնդային մակերևույթի (և գնդի) շոշափող հարթություն։

Գնդային մակերևույթի և հարթության շոշափման կետ։ Գնդային մակերևույթի և գնդի շոշափող ուղիղ։

Տարածության նկատմամբ նշանը (հոմոթետիա): *Ասենք տրված է O կետը և $k \neq 0$ որևէ իրական թվային արժեքը։ Կասենք, որ տարածության յուրաքանչյուր M կետի միջոցով կարող ենք գտնել M_1 կետը, որի համար $\overrightarrow{OM_1} = k\overrightarrow{OM}$։*

Մեզ հետաքրքրում են հոմոթետիայի հետևյալ հատկությունները։ Նախ նշենք, որ հոմոթետիայի միջոցով ուղիղը տրվում է ուղիղ, հարթությունը՝ հարթություն։ Ընդ որում՝ եթե հարթությունները զուգահեռ են, ապա նրանց հոմոթետիկ պատկերները ևս զուգահեռ հարթություններ են։ Հատվող հարթությունների հոմոթետիկ պատկերները հատվող հարթություններ են։ Հոմոթետիայի միջոցով հատվող ուղիղների հոմոթետիկ պատկերները հատվող ուղիղներ են։ Հոմոթետիայի միջոցով զուգահեռ ուղիղների հոմոթետիկ պատկերները զուգահեռ ուղիղներ են։ Հոմոթետիայի միջոցով հատվող ուղիղների հոմոթետիկ պատկերները հատվող ուղիղներ են։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն աշխատանքում փորձ է արված դիտարկել միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում եղած պայմանաշանների, նշանակումների և հասկացությունների ողջ համախումբը։ Նման ամփոփումը ուսուցչին կարող է օգնել պահպանելու հիմնական հասկացությունների, նշանակումների ու պայմանաշանների մուծման ընդհանուր պահանջները և նրանց բաշխումը դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում՝ ամեն անգամ բոլոր գրքերը չնայելով, որ շատ հոգնեցուցիչ է։ Ինչպես գրքում ամփոփված նյութը միայն հավաստող, արձանագրող բնույթ ունի (այն տացոլում է դասական դրույթյունը), այնպես էլ նախապատրաստելիս շատ դժվարություններ են ծագել։ Դրանք առաջին հերթին կապված են տարբեր դասագրքերում ուսումնական նյութի շարադրման զգալի տարբերությունների հետ։ Ներածության մեջ նշել ենք այն կոնցեպտերները, որոնց շրջանակներում պահպանվում են ուսուցման հիմնական բովանդակության պարզաբանման ու արտաքին ձևավորման որոշակի սկզբունքները։ Սակայն, այդ կոնցեպտների ներսում և նույնիսկ մեկ դասագրքի շրջանակներում ոչ միշտ է, որ միասնական մեթոդական մոտեցում կա հիմնական հասկացությունների մուծման և դրանք ընդհանուր տեքստից առանձնացնելու հարցում։ Պատահում են դեպքեր, երբ միևնույն դասագրքում հասկացությունները մուծվում են տարբեր կերպ՝ կամ բացատրվում են, կամ սահմանվում։ Այսպես, որոշ հասկացություններ մուծվում են ամենայն խստությամբ բացահայտ սահմանման օգնությամբ, մյուսները՝ միայն բացատրելով, որ փոխարինում է սահմանմանը, երրորդները՝ միայն պարզաբանող օրինակներով, չորրորդները՝ դասագրքի ընդհանուր տեքստում, կարծես ի միջի այլոց՝ անցողակի, ընդհանուր տեքստից չառանձնացնելով։ Ընդ որում, հաճախ նաև արտաքին ձևավորումը ընդհանուր մոտեցումով չի կատարվում (ընդգծում են տառատեսակներով առանձնացումները, հիմնական տեքստից բաժանում են կամ չեն բաժանում և այլն)։

Լրացուցիչ դժվարություններ ծագեցին տարրեր դասագրքերի և հատկապես տարրեր կոնցեպտների նյութերը միավորելիս։ Այս առումով էլ հասկացությունների մեր առանձնացրած համախումբը որոշ անգամ ինչ-որ տեսակետով կարող է թերի թվալ, մի այլ անգ՝ ավելորդ լինել, ուստի այդ կարգի որոշ հարցեր կարող են վիճելի լինել։ Սակայն հուսով ենք, որ ավելի աշխատությունը կարող է հանգել միասնական մոտեցում անհնարին դասագրքում ուսումնական նյութը ձևավորելիս, անշուշտ հաշվի առնելով դպրոցականների տարիքային առանձնահատկությունները և կոնկրետ բովանդակության յուրահատ-

կումը: Դա էլ իր հերթին կօգնի լուծելու մաթեմատիկայի դասագրքի կարևոր խնդիրներից մեկը՝ մաթեմատիկայի դպրոցական դասընթացի հասկացությունների կարգավորումն ու մի համակարգի բերումը: Գիրքն ուսուցչին հնարավորություն կտա տեսնելու հասկացությունների ողջ համակարգը և նրանց տեղը դասընթացում:

Հասկացությունների ընդհանուր համակարգի դիտարկումն օգնում է պարզելու պայմանանշանների և նշանակումների դերն ու տեղը մաթեմատիկայի դասընթացում: Դպրոցականների՝ մաթեմատիկայի դասընթացի սիմվոլիկայի ուսումնասիրումը հանրակրթական ու դաստիարակչական մեծ նշանակություն ունի ոչ միայն այն պատճառով, որ մեր ժամանակներում՝ գիտությունների մաթեմատիկանացման ժամանակներում այն սովորողներին նախապատրաստում է գիտական, վերացական մտածողության, այլև այն պատճառով, որ սովորողներին կյանքի է պատրաստում այնպիսի պայմաններում, երբ ավելի ու ավելի շատ են հանդիպում ու գործածվում պայմանական նշաններ ու նշանների համակարգեր:

Մարդը ամբողջ կյանքում գործ է ունենում ամենատարբեր բնույթի նշանների ու պայմանանշանների հետ. մեր հայրենիքի գերբն ու դրոշը, հնգաթև կարմիր աստղը, պիոներական ու կոմերիտական նշանները, ձայնագրության նշանները, դրամանիշերը, ճանապարհային երթևեկության նշանները, Մորզեի այբուբենը, լուսային ու ձայնային ազդանշանները, աշխարհագրական քարտեզների պայմանական նշանները, զանազան նշանակումները ֆիզիկայի, քիմիայի, գծագրության և մյուս դասընթացներում, արդի տեխնիկայում ու արտադրության մեջ և այլն: Այդ պայմանանշաններից շատերը գաղափարական-դաստիարակչական նշանակություն ունեն, աշակերտներին օգնում են կողմնորոշվելու այն ինֆորմացիայում, որ նրանք պետք է ընկալեն ու մշակեն:

Մաթեմատիկական սիմվոլիկան բաղկացուցիչ մաս է ինֆորմացիայի շատ տեսակների: Մաթեմատիկայի դպրոցական դասընթացը ամենահարմար տեղերից մեկն է, որտեղ աշակերտները կարող են համակարգված ու գիտակցված յուրացնել նշանային ինֆորմացիայի օգտագործման ու մշակման ընդհանուր սկզբունքները:

Նշանները ու նշանների համակարգերը հանգամանորեն քննարկվում են «Психологические проблемы переработки информации» հոդվածների ժողովածուում («Наука», 1977): Այդ խնդիրը քննարկելով ամենալայն առումով, ժողովածուի հեղինակները նշում են նրա կարևորությունը նշանային ինֆորմացիայի ընկալման ու մշակման համար ժամանակակից մարդուն նախապատրաստելու գործում: Ընդ որում, բավականաչափ ուշադրություն է դարձվում այն դերին, որ մա-

թեմատիկական նշանները խաղում են մարդու վերացական մտածողության գործում, մաթեմատիկայի ուսուցման հարցերը շոշափվում են նշանների ու գրանց համակարգերի յուրացման տեսակետից։ Հոդվածներից մեկում լուսաբանվում են նաև «մաթեմատիկական նշաններ» և «մաթեմատիկական սիմվոլիկա» տերմինների իմաստային տարբերության նրբերանգները։

Սույն աշխատությունում տերմինաբանական այդ տարբերությունները սկզբունքային չեն։ Մենք օգտվում ենք «մաթեմատիկական սիմվոլիկա» տերմինի ընդհանուր ընդունելությունից և հաշվի ենք առնում, որ ԷՀՄ-ի ծրագրավորման բնագավառում «պայմանանշան» («սիմվոլ») տերմինը լայնորեն օգտագործվում է «նշան»-ի համաոով։ Մաթեմատիկական պայմանանշանների թվում կան կալուսացած անվանումներ՝ «մաթեմատիկական գործողությունների նշաններ», «հարաբերությունների նշաններ» և այլն։

Մաթեմատիկայի դասընթացի սիմվոլիկայի ուսումնասիրումն առնչվում է ուսումնական պլանի մյուս առարկաների գիտելիքների յուրացման հետ։ Մաթեմատիկական պայմանանշանները ու նշանակումները հանդիպում են դպրոցի բոլոր առարկաներն ուսումնասիրելիս, ինչպես նաև առօրյայում՝ աշակերտների շրջապատում։ Մինչդեռ մաթեմատիկական պայմանանշանների, նշանակումների ու հաջորդությունների գործածումը մյուս առարկաներում ոչ միշտ է համաձայնեցվում, հատկապես կրթության նոր բովանդակության անցնելու շրջանում։ Պայմանանշանների ու նշանակումների գործածության տարբերությունը հաճախ հանդեցնում են պետական ստանդարտների խախտման։

Սույն գրքի նյութը կարող է օգնել տարբեր առարկաների դասավանդումը համաձայնեցնելու ընդհանուր աշխատանքին, միջառարկայական ավելի սերտ կապերի հաստատմանը և դրանով նպաստել աշակերտների՝ ուսումնասիրվող երևույթների ու փաստերի ամբողջական պատկերի ընկալմանը։

Միասնական դիրքերից սիմվոլիկայի դիտարկումը մյուս առարկաներում, դրա միջառարկայական համաձայնեցումը և որպես դրա հետևանք՝ ուսումնասիրվող պայմանանշանների թվի կրճատումը, պայմանանշանների գործածության հարցում անմիաբանության ու հակասականության վերացումը՝ անկասկած կնպաստեն ուսուցման կատարելագործմանը։ Նման աշխատանքը կարող էր նաև մեր հասարակության մարդու կողմից նշանակալին ինֆորմացիայի մշակման փիլիսոփայական ու հոգեբանական ընդհանուր խնդրի լուծման մաս կազմել։

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ

1. Մորո Մ. Ի., Բանտռովա Մ. Ա., Բելոյուկովա Գ. Վ.: *Մաթեմատիկա։ Դասագիրք 1-ին դասարանի համար։ Ե., «Լույս», 1983։*
2. Մորո Մ. Ի., Բանտռովա Մ. Ա.: *Մաթեմատիկա։ Դասագիրք 2-րդ դասարանի համար։ Ե., «Լույս», 1983։*
3. Պչյոլկո Ա. Ս., Բանտռովա Մ. Ա., Մորո Մ. Ի., Պիշկալո Ա. Մ.: *Մաթեմատիկա։ Դասագիրք 3-րդ դասարանի համար։ Ե., «Լույս», 1983։*
4. Վիլենկին Ն. Յա., Նեշկով Կ. Ի., Շվարցբուրդ Ս. Ի., Չեսնոկով Ա. Ս., Սեմուշին Ա. Գ.: *Մաթեմատիկա։ Դասագիրք միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի համար Ա. Ի. Մարկուշևիչի խմբագրությամբ։ Ե., «Լույս», 1983։*
5. Վիլենկին Ն. Յա., Նեշկով Կ. Ի., Շվարցբուրդ Ս. Ի., Չեսնոկով Ա. Ս., Սեմուշին Ա. Գ.: *Մաթեմատիկա։ Դասագիրք միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանի համար։ Ա. Ի. Մարկուշևիչի խմբագրությամբ։ Ե., «Լույս», 1982։*
6. Մակարիչև Յու. Ն., Մինդյուկ Ն. Գ., Մուրավին Կ. Ս.: *Հանրահաշիվ։ Դասագիրք միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի համար։ Ե., «Լույս», 1983։*
7. Մակարիչև Յու. Ն., Մինդյուկ Ն. Գ., Մուրավին Կ. Ս., Սուվորովա Ս. Բ.: *Հանրահաշիվ։ Դասագիրք միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար Ա. Ի. Մարկուշևիչի խմբագրությամբ։ Ե., «Լույս», 1983։*
8. Մակարիչև Յու. Ն., Մինդյուկ Ն. Գ., Մոնախով Վ. Մ., Մուրավին Կ. Ս., Սուվորովա Ս. Բ.: *Հանրահաշիվ։ Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար Ա. Ի. Մարկուշևիչի խմբագրությամբ։ Ե., «Լույս», 1982։*
9. Կոլմոգորով Ա. Ն., Սեմյոնովիչ Ա. Ֆ., Չերկասով Ռ. Ս.: *Երկրաչափություն։ Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 6—8-րդ դասարանների համար։ Ա. Ն. Կոլմոգորովի խմբագրությամբ։ Ե., «Լույս», 1982։*
10. Կոլմոգորով Ա. Ն., Աբրամով Ա. Մ., Վեյց Բ. Ե., Իվաշև-Մուսատով Օ. Ս., Իվլեվ Բ. Մ., Շվարցբուրդ Ս. Ի.: *Հանրահաշիվ և անալիզի հիմունքները։ Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 9—10-րդ դասարանների համար։ Ա. Ն. Կոլմոգորովի խմբագրությամբ։ Ե., «Լույս», 1983։*
11. Կլոպակի Վ. Մ., Սկոպեց Զ. Ա., Յագոդովսկի Մ. Ի.: *Երկրաչափություն։ Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների համար։ Զ. Ա. Սկոպեցի խմբագրությամբ։ Ե., «Լույս», 1983։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Հայերեն հրատարակության առաջաբանը 6
1. Պայմանանշաններ 8
2. Նշանակումներ 10
3. Հասկացություններ 17
I—III դասարանների մաթեմատիկա 18
IV—V դասարանների մաթեմատիկա 20
VI—VIII դասարանների հանրահաշիվ 25
VI—VIII դասարանների երկրաչափություն 36
IX—X դասարանների հանրահաշիվ և անալիզի հիմունքները 51
IX—X դասարանների երկրաչափություն 64
Ընդհանուր դիտողություններ 76
Յուցակ միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի դասագրքերի և ուսումնական ձեռնարկների 80

Իգոր Նիկոլաևիչ Անտիպով
Լյուդմիլա Սեմյոնովնա Շվարցբուրդ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐԸ, ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեռնարկ ուսուցիչների համար

Խմբագիր՝ Վ. Տ. Հակոբյան

Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Ս. Կ. Ղազարյան

Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Կ. Մկրտչյան

Պատվեր 436 *Տպաքանակ 20 000*

Հանձնված է շարվածքի 10. 02. 1983 թ.
Ստորագրված է տպագրության 7. 06 1983 թ.

Թուղթ № 3, 60×90 1/16 բարձր տպագր. տառատեսակը՝ «Գրքի սովորական»

հրատ. 4,2 մամ., տպագր. 5,0 մամ. տպ. 5,2 գուն. թերթ օտտ.

Գինը՝ 10 կոպ. ИБ—№ 1347

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի փող. 19ա.
Издательство „Луйс", Ереван—9, ул. Кирова, 19 а.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91.
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.